104 Երանելի այն օրն է, Տե՛ր,

1. Երանելի այն օրն է, Տե՛ր,
Որ ես բաժինս Քեզի ըրի.
Ուրախ հոգիս անդուլ Իր սերն
Ու ցնծություն պատմե պիտի:

Երանելի այն օրն ըսվի,
Որ Տերն մեղքերս ներեց ինծի:
«Արթուն կեցի՛ր, աղոթք ըրե՛
Ու միշտ ցնծա՛»,- ինծի կըսե:
Երանելի այն օրն ըսվի,
Որ Տերն մեղքերս ներեց ինծի:

2. Իմ սիրտս բոլոր Անոր կուտամ,
Որ իմ սիրոյս է արժանի,
Իր սեղանին երբ մոտենամ,
Ուրախ երգով Իր տունն լցվի:

3. Ահա Փրկչիս ես ուխտ ըրի՝
Տերոջն եմ ես, ու իմս է Ան:
Զիս Ան կանչեց, Անոր գացի
Ես՝ ճանչնալով ձայնն պատվական:

4. Փրկչիդ վրա հույս դնելով,
Խռովյալ հոգիս, հանգիստ ըլլաս.
Ամեն բարիք վայլես Իրմով
Եվ Իր քովեն չհեռանաս:

5. Իմ ուխտըս, ո՛վ Փրկիչ Հիսուս,
Ամեն օր նորոգեմ պիտի,
Ու երբ հասնիմ մահվան ժամուս,
Երգեմ պիտի՝ ուխտ սիրելի: